Վարդուտ գավառի բառ ու բանը. կազմող՝ պ. գ. դ. Կիմ Ղահրամանյան, *Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, 278 էջ:*

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը լույս է ընծայել պատմական գիտությունների դոկտոր Կիմ Ղահրամանյանի՝ Արցախ աշխարհի պատմական Վարդուտ գավառի ժողովրդական բանավոր ավանդությանը նվիրված «Վարդուտ գավառի բառ ու բանը» ուշագրավ ժողովածուն (պատասխանատու խմբագիր՝ բանասիրական գիտությունների թեկնածու, ավագ գիտաշխատող Թամար Հայրապետյան):

Աշխատությունը կազմված է այդ տարածաշրջանում ծնված, ապրած, բռնագաղթված անձանց մասին Ա. Ղահրամանյանի գրառած նյութերի հիման վրա: Կազմողը դրանք ներկայացնում է առանձին բաժիններով և մանրամասն բնութագրումներով: Հրատարակվող նյութը հարազատ է բնաշխարհի մարդկանց ժողովրդական խոսքին ու մտածողությանը:

Ժողովածուի բնագրերը ներկայացված են վեց բաժիններով՝ 1. Զվարճախոսություն, հուշապատում-զրույցներ, 2. Հանելուկներ, 3. Առած-ասացվածքներ, 4. Խաղիկներ, 5. Մանկական խաղեր, 6. Տեղանուններ, տոհմանուններ, մականուններ:

Գիրքն ունի առաջաբան, ծանոթագրություններ, բարբառային և օտար բառերի բացատրական բառարան, հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով ամփոփումներ, համալրված է 18 նշանավոր ասացողների լուսանկարներով և ունի գրքի բովանդակությանը համապատասխան խորհրդանշական կազմ: Առաջաբանն ու ամփոփումն ապահովում են գիտական իմացություն, սոցիալ-քաղաքական իրադարձությունների տեղեկատվության լայն տեսադաշտ:

Ուշ միջնադարում գտնվելով Պարսկաստանի կազմի մեջ՝ Արցախը սկսել է կոչվել նաև Ղարաբաղ, իսկ հին ձեռագրերից հայտնի Վարդուտը[1] պարսկերենի ազդեցությամբ թարգմանաբար դարձել է Գյուլիստան: 1921 թ. Գյուլիստանի մելիքության տարածքը բռնակցվում է Ադրբեջանին: Այն սկսում է կրել խորհրդահայ բոլշևիկյան գործիչ Ստ. Շահումյանի անունը:

1921–1923 թթ. Ադրբեջանը դիմում է ամեն բռնության ու կեղծիքի, որպեսզի Ղարաբաղն ինքնավարություն չստանա: Խեղաթյուրվում են հողաչափության ու մարդահամարի արդյունքները, ձգձգվում և նենգափոխվում է վերադաս մարմինների հրահանգների կատարումը[2]: Այնուամենայնիվ, Ղարաբաղը կարողանում է պահպանել իր պետականությունը ինքնավար մարզի կարգավիճակով:

1923 թվականին, սակայն, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի (ԼՂԻՄ) սահմանները գծվում են այնպես, որ մարզից դուրս են մնում Խամսայի հինգ հանրահայտ մելիքություններից՝ Գյուլիստանի տարածքը, Գանձակի լեռնային շրջանները, Արաքսի ձախափնյա տարածքը, Հայաստանի հետ ընդհանուր սահմանային շրջանները[3]: Ինքնավարությունը ստեղծվում է ըստ էության ոչ թե ամբողջ Լեռնային Ղարաբաղում, այլ նրա միայն կենտրոնական մի փոքր շրջանում՝ անջրպետված Հայաստանից, ամբողջությամբ կղզիացած Ադրբեջանի կազմի մեջ, զրկված կենսապահովման ինքնուրույն հնարավորություններից:

ԼՂԻՄ-ի սահմաններից դուրս թողնված և անմիջականորեն Ադրբեջանին ենթարկված ղարաբաղյան հայկական գյուղախմբերը (հետագայում դարձած Շահումյանի, Խանլարի, Գետաբեկի, Շամխորի, Դաշքեսանի՝ հայկական Քարհատի և այլ շրջաններ) տասնամյակներ շարունակ ջանքեր են թափում՝ մտնելու ԼՂԻՄ-ի կազմի մեջ, բայց Ադրբեջանը ճնշում է հայության այդ ստվար հատվածի օրինական ձգտումները, հետևողականորեն գործադրում հայրենի հողից նրանց դուրս մղելու քաղաքականություն: Նշենք նաև, որ ԼՂԻՄ-ը նույնպես Ադրբեջանի կողմից ենթարկվում է ազգային խտրականության, արհեստականորեն ադրբեջանական բնակչության ներհոսքը ուժեղացնելու միջոցով հայերին մարզից դուրս մղելու ռազմավարության:

1991 թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում ԼՂԻՄ-ի և Շահումյանի շրջանի բոլոր մակարդակների ժողովրդական պատգամավորների կողմից մարզի ու շրջանի սահման-

---

[1] *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Գ մաս (1481–1500), Երևան, 1967, էջ 446 («ի գեւղս որ կոչի Գուլիստան, որ է Վարդուտ»):*

[2] *Բ. Ուլուբաբյան. Արցախի պատմությունը (սկզբից մինչև մեր օրերը), Երևան, 1994, էջ 344–350:*

[3] *Նույն տեղում, էջ 251:*

ներով հռչակվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

Ինքնապաշտպանության ուժերը քանիցս ջարդում են ադրբեջանցիներին ու հետ շպրտում հայրենի սահմաններից: Սակայն քայքայվող ԽՍՀՄ-ի ապականված ղեկավարության ու բանակի օգնությամբ հակառակորդը ԼՂԻՄ-ի դեմ սանձազերծում է բացահայտ պատերազմ՝ կազմակերպելով հայ բնակչության ջարդեր՝ Սումգայիթում, Բաքվում, Կիրովաբադում, Մինգեչաուրում: 1992 թվականի հունիսի 13–14-ը հայաթափվում է նաև Շահումյանի շրջանը: Հարյուրավոր խաղաղ բնակիչներ են զոհվում իրենց տներում ու բռնի տեղահանության դաժան ճանապարհին: Առավել լավատեսները, մնալով հայրենի գյուղերում, մինչև հիմա իրենց անհայտ ճակատագրերով մորմոքում են հարազատների սրտերը:

Իրենց բնօրրանին, հող ու ջրին սիրահարված այս մարդկանց ժողովրդական մտածողության, կյանք ու կենցաղի, սովորությունների մասին է պատմում «Վարդուտ գավառի բառ ու բանը» ժողովածուն, որն ամփոփում է հայոց հինավուրց գավառի հայրենազրկված հայության ժողովրդագիտական ժառանգությունը:

Գրքում տեղ են գտել հավատալիքային, սովորութային ինչպես ընդհանուր հայկական, օրինակ՝ «աչքալուս», «ականջկլա», այնպես էլ Շահումյանի շրջանում կենցաղավարող նույնիմաստ իրողությունների անվանումներ՝ «ընգուճափռնուկ», «ըշկըլյուսանք»:

Զվարճապատումներում անպակաս է խմիչքների՝ թթի օղու, նռան, խաղողի գինիների օգտագործման մշտական սովորությունը: Զվարճապատումներից մեկում Պյատիգորսկում ապրող քյավառցին բռնագաղթված գյուլիստանցի հարևանին հյուր է կանչում և հարցնում՝ «օրաղ կխմե՞ս» (Գյուլիստանում օրաղը խոտ հարելու գործիքն է): Գյուլիստանցին պատասխանում է. «Ինչու՞ չեմ խմի, հալա գերանդին էլ «զակուսկի կանեմ» (էջ 30–31):

Իսկ հնագույն ծիսապաշտամունքային արմատներից սերող նռան պաշտամունքը՝ շրջանում իր բացառիկ առատությամբ, խորհրդանշային ենթատեքստերով հանդես է գալիս այլաբանական հանելուկի ձևով՝ «Առնում ես՝ մի հատ, տուն ես տանում՝ դառնում է հազար հատ» (էջ 185): Շահումյանցիները հստակորեն են գիտակցում սեղմ ու դիպուկ խոսքի համուհոտը. «Լյավ չաթուն էրգյան ա, ամա լյավ զրուցը՝ կարճ» (էջ 190):

Այսօր տարածաշրջանը լիովին հայաթափվել է, շահումյանցիները հայրենազրկվելով սփռվել են աշխարհով մեկ՝ Միացյալ Նահանգներ, Ֆրանսիա, Գերմանիա, Ուկրաինա, Ռուսաստանի Դաշնություն, Ղազախստան: Մի փոքր հատված ապաստան է գտել ՀՀ-ում, ԼՂՀ-ում:

Շահումյանցիների հետ աշխարհով մեկ սփռվել են այդ հողի վրա ստեղծված զրույցները, խրատական ու թնավոր խոսքերը, զվարճալի պատմությունները: Շահումյանցին կարծում էր, որ «Օրիշին աշխատանքավը փոր չի կուշտանալ» (էջ 191), բայց, ի զարմանս նրա, իր հինավուրց հողի վրա տքնաջան աշխատանքով ստեղծած բերք ու բարիքն այսօր վայելում են վաչկատունները: Բռնագաղթվածների համար «Ղարիբությունում օրը տարի ա տյառնում», քանի որ «Մարթը առանց ուրան ծննդավայրի, հինչյանգի բյուլբյուլը՝ առանց երքի» (էջ 191): Այս ամենով հանդերձ՝ շահումյանցին նոր միջավայրում շտկում է իր մեջքը, աշխատասիրությամբ զարմացնում է օտարներին՝ համոզված լինելով, որ «Ման մի գործ սկսելն ա տիժար» (էջ 89):

Լեզվամշակութային նոր միջավայրում կորստյան վտանգի տակ են դարեր շարունակ Վարդուտ գավառում ստեղծված էթնոմշակութային արժեքները: Հավաքելով այդ նյութերը և հրապարակելով՝ գրքի կազմողը հույս ունի կորստից փրկելու դրանք՝ որպես հայ ժողովրդի հոգևոր մշակույթի բաղկացուցիչ:

ԹԱՄԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ